ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/430/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 23 դեկտեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի դեկտեմբերի 23-ին քննելով Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/430/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով վերապահված գործառույթը, ինչպես նաև հիմք ընդունելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից Կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարները գերազանցել են «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական

օրենք) 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նվիրատվությունների, անդամավճարների, մուտքի վճարների առավելագույն սահմանաչափը:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունիսի 10-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պաշտոնատար անձին է ուղղվել թիվ 01/1850-2024 գրությունը, որով Հանձնաժողովը խնդրել է Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման նպատակով հնգօրյա ժամկետում Հանձնաժողովի պաշտոնական՝ info@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով, առձեռն կամ փոստային առաքմամբ Հանձնաժողով ներկայացնել 2023 հաշվետու տարվա կուսակցության բոլոր բանկային հաշիվների (բացառությամբ նախընտրական հիմնադրամների) վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ բանկի կողմից վավերացված բանկային հաշիվների մուտքերի և ելքերի վերաբերյալ քաղվածքները (առկայության դեպքում նաև դրանց էլեկտրոնային տարբերակները), կուսակցությանն անդամավճարներ վճարած անձանց՝ կուսակցության անդամ հանդիսանալու, ինչպես նաև կուսակցությանը անդամավճար վճարելու չափին, կարգին և ժամկետներին վերաբերող փաստաթղթերը:

Ի լրումն վերոգրյալի՝ Հանձնաժողովը նշված գրությամբ խնդրել է Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացությամբ, ինչպես նաև «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով հայտնաբերված անհամապատասխանությունների և խախտումների հետ անհամաձայնության դեպքում ներկայացնել դրանց վերաբերյալ կուսակցության դիրքորոշումն արտահայտող լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հանձնաժողովը նշված գրությամբ միաժամանակ հայտնել է Օրենսգրքի 189.14-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության մասին՝ Հանձնաժողովին սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկությունները կամ պահանջվող նյութերը չտրամադրելու համար:

1.3 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 10-ի թիվ 01/1850-2024 գրության՝ Կուսակցության կողմից Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին է ներկայացվել պահանջվող տեղեկատվությունը, այդ թվում նաև՝ 2023 հաշվետու տարվա կուսակցության բոլոր բանկային հաշիվների քաղվածքները:

1.4 Համաձայն 2023 թվականի հաշվետու տարվա կուսակցության բանկային հաշվի քաղվածքի տվյալների՝ Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից 2023 թվականի ընթացքում Կուսակցությանը՝ որպես նվիրատվություն, փոխանցվել է ընդհանուր առմամբ 2,699,000 ՀՀ դրամ գումար:

1.5 Վերոնշյալ խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 01/3056-2024 գրությամբ Տիգրան Յուրիի Դարբինյանին է ուղարկել ծանուցում՝ նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվությունների, անդամավճարների, մուտքի վճարների՝ օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափը գերազանցելու զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով՝ ծանուցումը ստանալուն հաջորդող 7-րդ աշխատանքային օրը՝ ժամը 12:30-ին՝ մասնակցելու Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, սակայն պատվիրված նամակով ուղարկված ծանուցումն ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, հետադարձ ծանուցումը չի ստացվել:

1.6 2024 թվականի նոյեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (հղում՝ https://www.azdarar.am/announcments/org/436/01574460/) հրապարակվել է Տիգրան Յուրիի Դարբինյանին ուղարկված գրավոր ծանուցում՝ ծանուցմամբ նշված օրը և ժամին Հանձնաժողով ներկայանալու՝ Արձանագրություն կազմելու նպատակով, միաժամանակ, ծանուցումն ուղարկվել է անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետին:

1.7 2024 թվականի նոյեմբերի 14-ին պատշաճ ծանուցված Տիգրան Յուրիի Դարբինյանի մասնակցությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/735/2024 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.8 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 01/3818-2024 գրությամբ Տիգրան Յուրիի Դարբինյանին է ուղարկվել 2024 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը՝ 16:00-ին նշանակված, Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.9 Նշանակված օրը և ժամին, Տիգրան Յուրիի Դարբինյանի բացակայությամբ, թիվ ՎԻՎ/430/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի կապակցությամբ անցկացվել է Հանձնաժողովի նիստ:

1.10 Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և հաշվի առնելով, որ 2024 թվականի դեկտեմբերի 11-ի դրությամբ Տիգրան Յուրիի Դարբինյանը պատշաճ ծանուցված չի եղել (Հանձնաժողովում առկա չէր Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելը հավաստող ապացույց՝ փոստային հետադարձ առաքանին) գործի քննության օրվա և ժամի մասին, Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 11-ին կայացրել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնելու մասին թիվ ՎԻՎ/430/2024-1 որոշումը՝ մինչև կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալը:

1.11 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 01/4162-2024 գրությամբ Տիգրան Յուրիի Դարբինյանին է ուղարկվել 2024 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը՝ 16:00-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիրը, որը ներկայացվել է նաև վերջինիս հայտարարագրում նշված (Տիգրան Յուրիի Դարբինյանը հանդիսանում է նաև հայտարարատու պաշտոնատար անձ)՝ էլեկտրոնային փոստի հասցեին:

1.12 2024 թվականի դեկտեմբերի 16-ին Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին է ստացվել Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից հավաստում՝ գործի քննության օրվա և ժամի մասին ծանուցված լինելու վերաբերյալ

1.13 Հաշվի առնելով Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշվածով պայմանավորված՝ վերացել են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կասեցման հիմքերը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Տիգրան Յուրիի Դարբինյանի բացակայությամբ 2024 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 16:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Սույն վարույթի շրջանակներում արձանագրության կազմման ժամանակ վարույթի մասնակիցը հայտնել է, որ նվիրատվություն կատարելիս որևէ դիտավորություն չի ունեցել օրենքով սահմանված սահմանաչափը գերազանցելու, տեղյակ է եղել օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափի մասին, պարզապես տեղյակ չի եղել, որ այդ սահմանաչափը ներառում է նաև կուսակցությանը վճարվող անդամավճարները:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/430/2024 գործում առկա նյութերը, Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալները՝ համադրելով դրանք Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների հետ և հաշվի առնելով Աուդիտորական եզրակացությամբ հայտնաբերված առերևույթ խախտումները՝ կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Հաշվետու տարում բանկային համապատասխան փոխանցումներ կատարելով, Կուսակցությանը նվիրատվություններ ձևակերպելու միջոցով Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից 2023 թվականի ընթացքում Կուսակցությանն է փոխանցվել ընդհանուր 2,699,000 (երկու միլիոն վեց հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամի չափով գումար, որի պարագայում Կուսակցությանը կատարված նվիրատվության օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի չափը կազմում է 199,000 (հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4.5 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, **այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը:**

4.6 Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ առավելագույն չափը գերազանցող գումարի չափով:

4.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե (...) պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն ուղարկվում է՝ ֆիզիկական անձի դեպքում՝ աշխատանքի վայրի հասցեով (վարչական վարույթի նյութերում դրա առկայության դեպքում) և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին (բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական վարույթը հարուցվել է համայնքի կողմից), իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով:

4.11 Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):

4.12 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.13 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.14 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.15 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, ինչպես նաև նվազեցնել կուսակցությունների կախվածությունը մասնավոր անձանցից:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից կատարված արարքով, այն է՝ Օրենսգրքի 189.20-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտմամբ խաթարվել է նշված նորմով Օրենսդրի կողմից վերը նշված հետապնդվող նպատակը, քանի որ վերջինիս գործողություններով չեն պահպանվել Կուսակցությանը նվիրատուի կողմից նվիրատվություն կատարելու առավելագույն չափին ներկայացվող պահանջները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Տիգրան Յուրիի Դարբինյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Հաշվի առնելով, որ Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող չափով տուգանքի նշանակում, իսկ սույն դեպքում Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից Կուսակցությանը կատարված նվիրատվության չափը կազմել է 2,699,000 (երկու միլիոն վեց հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից

Կուսակցությանը կատարված նվիրատվության օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի չափը կազմում է 199,000 (հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը Տիգրան Յուրիի Դարբինյանի կողմից նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու համար Տիգրան Յուրիի Դարբինյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ առավելագույն չափը գերազանցող գումարի՝ ***199,000 (հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիգրան Յուրիի Դարբինյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ